## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 120 -Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 11-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (13) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | | — | — | — |
| Սարգսյան Արփա | | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | | — | — | — |
| Պառավյան Գոհար | | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | | — | — | — |
| Այվազյան Վրույր | | — | — | — |
| Գևորգյան Համլետ | | — | — | — |
| Քալաշյան Վարսենիկ | | — | | — |
| Թորոսյան Հրայր | — | — | — | բացակա |
| Տոնոյան Արտյոմ | | — | | — |
| Գրիգորյան Թամարա | | — | — | — |
| Սարգսյան Ալիկ | | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

ՀՀ Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2023թ. դեկտեմբերի 11-ի թիվ 120 -Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ
## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:
/Զեկ.Խ.Վարդանյան/
2.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:
/Զեկ.Խ.Վարդանյան/
3. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
/Զեկ.Մ.Մեսրոպյան/
4. Ամանորի կապակցությամբ Գյուլագաակ համայնքի մանկապարտեզ և առաջինից չորրորդ դասարան հաճախող երեխաներին նվերներ տրամադրելու մասին:
/Զեկ.Մ.Մեսրոպյան/
5. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների հավելավճարի կիրառման կարգը և չափերը հաստատելու մասին:
/Զեկ. Մ.Մեսրոպյան/
6.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 25 -օրյա վարժական դասընթացների մեկնած զինապարտների ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
/Զեկ.Ա.Դավոյան/
7.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի նորածիններ ունեցող և հարազատին կորցրած ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
/Զեկ. Ա. Դավոյան/
8.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու մասին:
/Զեկ.Ս. Ղուկասյան/
9. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի «Վարդաբլուրի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի աշխատակիցների 2024 թվականի հաստիքացուցակը հաստատելու մասին:
/ԶԵԿ.Ս.Նալբանդյան/
10.Գյուլագարակ համայնքի վարչական սահմաններում «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին
/Զեկ.Ս.Սուքիասյան/
11.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման կարգը հաստատելու
/Զեկ.Մեսրոպյան/
12.Գուլագարակ համայնքում վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և վճարման կարգը հաստատելու մասին:
/Զեկ.Մ.Մեսրոպյան/
13. Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին:
/Զեկ. Ս.Սուքիասյան/
14.Գյուլագարակ համայնքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանելու մասին
/Զեկ.Ս. Սուքիասյան/

15.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին
/Զեկ.Ս.Սուքիասյան/
16.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման եվ (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները ու պայմանները սահմանելու մասին
/Զեկ.Ս.Սուքիասյան/
17.ՀՀ  Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին:
/Զեկ.Սմբատ Սուքիասյան/
18.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները  և պայմանները սահմանելու մասին:
/Զեկ.Ս.Սուքիասյան/
19. Գյուլագարակ համայնքի Պուշկինո  բնակավայրի  ջրագծերի նախագծային փաստաթղթերի կազմման համար գումար տրամադրելու վերաբերյալ:
/Զեկ.Ս.Սուքիասյան/
20. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2023 թվականի    մայիսի  17-ի թիվ 64-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
/Զեկ. Ս.Ղուկասյան/
21.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու  չորրորդ նստաշրջանի հերթական նիստի օր սահմանելու մասին:
/Զեկ. Ս. Նալբանդյան/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ    ՍԵՐԻՆԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 121 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետով, ինչպես նաև հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Գյուլագարակ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Արմեն Սիրակի Մարիկյանին նշանակել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ղեկավարի տեղակալ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (13) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | [signature] | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | [signature] | — | — | — |
| Սարգսյան Արդա | [signature] | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | [signature] | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | [signature] | — | — | — |
| Պառավյան Գոհար | [signature] | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | [signature] | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | [signature] | — | — | — |
| Այվազյան Վրույր | [signature] | — | — | — |
| Գևորգյան Համլետ | [signature] | — | — | — |
| Քալաշյան Վարսենիկ | [signature] | — | — | — |
| Թորոսյան Հրայր | | — | — | բացակա |
| Տոնոյան Արփյոմ | [signature] | — | — | — |
| Գրիգորյան Թամարա | [signature] | — | — | — |
| Սարգսյան Ալիկ | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 122-Ն

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Գյուլագարակ համայնքի 2023թվականի տարեկան բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (8) | Դեմ (2) | Ձեռնպահ (3) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | [signature] | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | [signature] | — | — | — |
| Սարգսյան Աիդա | [signature] | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | [signature] | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | [signature] | — | — | — |
| Պառավյան Գոհար | [signature] | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | [signature] | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | [signature] | — | — | — |
| Այվազյան Վրույր | — | — | [signature] | — |
| Գևորգյան Համլետ | — | — | [signature] | — |
| Քալաշյան Վարսենիկ | — | — | [signature] | — |
| Թորոսյան Հրայր | — | — | — | բացակա |
| Տոնոյան Արտյոմ | — | [signature] | — | — |
| Գրիգորյան Թամարա | — | [signature] | — | — |
| Սարգսյան Ալիկ | | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] /Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ/

3. 01-01-01 ապարատի 4241 մասնագիտական ծառայություն հոդվածում ավելացնել 70 000 / յոթանասուն հազար/ ՀՀ դրամ

4831 դատ. Կողմից նշ. Տույժեր և տուգանքներ հոդվածում ավելացնել 500 000 / հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ

4111 աշխատավարձեր հոդվածում `10 000 000/ տասը միլիոն/ ՀՀ դրամ

4112 պարգևավճարներ հոդվածում՝ 3 440 000 / երեք միլիոն չորս հարյուր հազար / ՀՀ դրամ 4241 մասնագիտական ծառայություններ հոդվածում՝ 2 100 000 / երկու միլիոն հարյուր հազար/ ՀՀ դրամ

4823 պարտադիր վճար՝ 500 000 / հինգ հարյու հազար / ՀՀ դրամ

10-04-01 ընտանիքի անդամներ նախահաշվում ավելացնել 500 000/ հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ 10-07-01 սոց. անապահություն անձանց օգնություն նախահաշվում ավելացնել 500 000/ հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ

08-02-04 այլ մշակույթային կազմակերպություններ նախահաշվի 4269 հատուկ նպատակային այլ նյութեր հոդվածում ավելացնել 1 683 624/ մեկ միլիոն վեց հարյուր ութսուներեք հազար վեց հարյուր քսանչորս/ ՀՀ դրամ

09-05-01 արտադպրոցական նախահաշվի 4111 աշխատավարձի հոդվածից 55 500/ հիսուն հինգ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ տեղափոխել 4212 մասնագիտական ծառայություններ հոդված

04-03-06 ոչ էլեկտրական էներգիա եկամտային մասում ավելացնել 14 400 000 / տասնչորս միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ

01-06-01 ընդհարուր բնույթի նախահաշվի 5112 շենքեր և շինություններ կառուցում հոդվածում ավելացնել 14 400 000/ տասնչորս միլիոն չորս հարյուր չորս/ ՀՀ դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ Լոռու մարզի

Գյուլագարակ համայնքի ավագանու

2023թ. դեկտեմբերի 11 -ի թիվ 122 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. 2023թ պահուստային ֆոնդից կատարել հատկացում ֆոնդային բյուջե 7 343 400 / յոթ միլիոն երեք հարյուր քառասուներեք հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ

08-01-01 Սպորտային միջոցառումներ նախահաշվի 5112 շենքեր և շինությունների կառուցում հոդվածում ավելացնել 3 200 000/ երեք միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ
01-06-01 ընդհանուր բնույթի ծառայություն նախահաշվի 5134 նախագծահետազոտական ծախսեր հոդվածում ավելացնել՝ 710 000/ յոթ հարյուր տասը հազար/ ՀՀ դրամ
09-05-01 արտադպրոցական դաստիարակության նախահաշվի 5112 շենք շինությունների կառուցում հոդվածում ավելացնել 753 900/ յոթ հարյուր հիսուներեք հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ
06-04-01 փողոցային լուսավորություն նախահաշվի 5112 հոդվածի շենքեր և շինությունների կառուցում հոդվածում ավելացնել 679 500/ վեց հարյուր յոթանասուն ինը հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ
06-04-01 փողոցային լուսավորություն նախահաշվի 5134 հոդվածի նախագծահետազոտական ծախսեր հոդվածում ավելացնել 150 000 /հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ
06-03-01 ջրամատակարարում նախահաշվի 5134 նախագծահետազոտական ծախսեր հոդվածում ավելացնել տեղափոխել 1 850 000 / մեկ միլիոն ութ հարյու հիսուն հազար/ ՀՀ դրամ

2. 09-01-1 նախադպրոցական կրթություն նախահաշվից պակասացնել

4637 հոդվածից ՝7 500 000 / յոթ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ

04-02-01 գյուղատնտեսական նախահաշվի 4111 աշխատավարձեր հոդվածից՝ 283 624 / երկու հարյուր ութսուն երեք հազար վեց հարյուր քսանչորս/ ՀՀ դրամ
04-02-01 գյուղատնտեսական նախահաշվի 4262 հոդվածից պակասեցնել 110 000/ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ
06-03-01 ջրամատակարարում նախահաշվի 4269 հատուկ նպատակային նյութեր հոդվածից՝ 400 000/ չորս հարյուր հազար / ՀՀ դրամ
06-04-01 փողոցների լուսավորում նախահաշվի 4239 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածից պակասեցնել 200 000/ երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ
08-02-03 մշակույթի տներ ակումբներ նախահաշվի 4637 հոդվածից պակասացնել 9 000 000/ ինը միլիոն/ ՀՀ դրամ
09-05-01 արտադպրոցական դաստիրակություն նախահաշվի 4637 հոդվածից պակասացնել 1 800 000 / մեկ միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 123 -Ա

ԱՄԱՆՈՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒԼԱԳԱԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԵՎ ԱՌԱՋԻՆԻՑ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՆՎԵՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ինչպես նաև հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է .

**1. Գյուլագարակ** համայնքի մանկապարտեզ և առաջինից չորրորդ դասարան հաճախող երեխաների համար Ամանորյա նվերներ գնելու կապակցությամբ , Գյուլագարակ համայնքի 2023թ. բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» 08-02-04 4269 հոդվածով նախատեսված գումարից տրամադրել 1.294 000 (մեկ միլիոն երկու հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (13) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | [signature] | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | [signature] | — | — | — |
| Սարգսյան Աիդա | [signature] | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | [signature] | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | [signature] | — | — | — |
| Պառավյան Գոհար | [signature] | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | [signature] | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | [signature] | — | — | — |
| Այվազյան Վրույր | [signature] | — | — | — |
| Գևորգյան Համլետ | [signature] | — | — | — |
| Քալաշյան Վարսենիկ | [signature] | — | — | — |
| Թորոսյան Հրայր | | — | — | բացակա |
| Տոնոյան Արտյոմ | [signature] | — | — | — |
| Գրիգորյան Թամարա | [signature] | — | — | — |
| Սարգսյան Ալիկ | | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 124 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի բ) կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով՝ **Գյուլագարակի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հաստատել՝ ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների հավելավճարի կիրառման կարգը և չափերը՝ համաձայն հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ /12/ | Դեմ /0/ | Ձեռնպահ /1/ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | | — | — | — |
| Սարգսյան Աիդա | | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | | — | — | — |
| Պառավյան Գոհար | | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | | — | — | — |
| Այվազյան Վրույր | | — | — | — |
| Գևորգյան Համլետ | | — | — | — |
| Քալաշյան Վարսենիկ | | — | — | — |
| Թորոսյան Հրայր | — | — | | բացակա |
| Տոնոյան Արտյոմ | | — | | — |
| Գրիգորյան Թամարա | | — | — | — |
| Սարգսյան Ալիկ | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 11-ի
թիվ 124 -Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ

**1.** Սույն կարգով կարգավորվում են Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճանի համար կամ համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների՝ տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգի և չափի հետ կապված հարաբերությունները:

**2.** Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի տրամադրման դեպքում համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տոկոսային ավելացում 5%-ի չափով՝ ավելի բարձր դասային աստիճանի համար:

**3.** Համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների՝ տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժի համար հավելավճարը տրվում է տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար:

Համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների՝ տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարը համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է համաձայն աղյուսակի 1-ի և կիրառվում է սահմանված աշխատանքային ստաժի լրանալու ամսվան հաջորդող ամսվա մեկից:

**Աղյուսակ 1**

| Աշխատակազմում համայնքային ծառայողի աշխատանքային ստաժը՝ | Մինչև 5 տարի | 5 տարի | 6 տարի | 7 տարի | 8 տարի | 9 տարի | 10 տարի | 10 տարուց վերև |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի չափը | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 5 | 10 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| (պաշտոնային դրույքաչափի նկատմամբ %-ով)՝ | | | | | | | | |

**4.** Սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հավելավճարի իրավունքի դեպքում՝ համայնքային ծառայողին տրամադրվում է դրանցից առավելագույնը:

**5.** Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու, կամ տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր գումարով:

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 125 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 25 -ՕՐՅԱ ՎԱՐԺԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԵԿՆԱԾ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման նպատակով դիմումների քննարկման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 14-Ա որոշումը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի բյուջեից 25-օրյա վարժական դասընթացներին մեկնած զինապարտների ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (13) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | | — | — | — |
| Սարգսյան Աիդա | | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | | — | — | — |
| Պառավյան Գոհար | | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | | — | — | — |
| Այվազյան Վրույր | | — | — | — |
| Գևորգյան Համլետ | | — | — | — |
| Քալաշյան Վարսենիկ | | — | — | — |
| Թորոսյան Հրայր | — | — | — | բացակա |
| Տոնոյան Արփյոմ | | — | — | — |
| Գրիգորյան Թամարա | | — | — | — |
| Սարգսյան Ալիկ | | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված

ՀՀ Լոռու մարզի

Գյուլագարակ համայնքի ավագանու

2023 թվականի դեկտեմբեր 11 -ի թիվ 125 -Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ ԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ 25 ՕՐՅԱ ՎԱՐԺԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԵԿՆԱԾՆԵՐԻ

| Հ/Հ | ԿՈՉՈՒՄ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ | ԲՆԱԿԱՎԱՅՐ | ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓ /ՀՀ ԴՐԱՄ/ | ԱՆՁՆԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ | ՀԱՇՎԵՀԱՄԱՐ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Շ-ն | Սոֆյան Արեն Վրեժի | գ. Հոբարձի | Քսան հազար | AU0504631 | 2470022145640000 |
| 2 | | Ջոհրաբյան Յուրա Համլետի | գ. Վարդաբլուր | Քսան հազար | AP0621605 | 2470022145640000 |
| 3 | | Մանուկյան Արկադի Գևորգի | գ. Վարդաբլուր | Քսան հազար | AT0355834 | 2470022145640000 |
| | | | | | | |
| | Ընդամենը՝ 60 000/վաթսուն հազար /ՀՀ դրամ | | | | | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԵՐՈԲԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 126 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման նպատակով դիմումների քննարկման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան,հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները, ինչպես նաև համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննող հանձանժողովի եզրակացությունը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից

ա/ նորածիններ ունեցող ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն/ համաձայն թիվ 01 հավելվածի

բ/ հարազատին կորցրած ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն համաձայն թիվ 02 հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (13) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | [signature] | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | [signature] | — | — | — |
| Սարգսյան Աիդա | [signature] | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | [signature] | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | [signature] | — | — | — |
| Պառավյան Գոհար | [signature] | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | [signature] | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | [signature] | — | — | — |
| Այվազյան Վրույր | [signature] | — | — | — |
| Գևորգյան Համլետ | [signature] | — | — | — |
| Քալաշյան Վարսենիկ | [signature] | — | — | — |
| Թորոսյան Հրայր | [signature] | — | — | — |
| Տոնոյան Արկյում | — | — | — | բացակա |
| Գրիգորյան Թամարա | [signature] | — | — | — |
| Սարգսյան Ալիկ | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված թիվ 01

ՀՀ Լոռու մարզի

Գյուլագարակ համայնքի ավագանու

2023 թվականի դեկտեմբեր 11 -Ի թիվ 126 -Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՆՈՐԱԾԻՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

| N | Ազգանուն Անուն | Համայնք | Գումարի չափ /ՀՀ դրամ/ | Հաշվեհամար | Անձնագրի տվյալներ | Անձնագիրը վավեր է |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գրիգորյան Մարետա Ջհանգրի | Վարդաբլուր | Քսան հազար | 2470022145640000 | 012446191 | 25.12.2029թ. |
| 2 | Թամարյան Ալբերտ Ռազմիկի | Կուրթան | Քսան հազար | 2470022145640000 | AT0225018 | 22.07.2029թ. |
| 3 | Մազթաղյան Արարատ Ավագի | Կուրթան | Քսան հազար | 2470022145640000 | 013576533 | 08.04.2032 |
| 4 | Հովակիմյան Միեր Մխիթարի | Հոբարձի | Քսան հազար | 2470022145640000 | 008638934 | 27.10.2027թ. |
| 5 | Աբրահամյան Անի Աբրահամի | Հոբարձի | Քսան հազար | 2470022145640000 | 006998744 | 29.07.2025թ. |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ 100 000/ ՀԱՐՅՈՒՐ ՀԱԶԱՐ/ՀՀ ԴՐԱՄ | | | | | |

Աշխատակազմի քարտուղար Մերինե Նալբանդյան

Հավելված 02

ՀՀ Լոռու մարզի

Գյուլագարակ համանքի ավագանու

2023 թվականի դեկտեմբերի 11 -ին -թիվ որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

| N | Ազգանուն Անուն Հայրանուն | Համայնք | Գումարի չափ/ՀՀ/դրամ/ | Հաշվեհամար | Անձնագրի տվյալներ | Անձնագիրը վավեր է |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Վարդանյան Գայանե Արմենի | Վարդաբլուր | Երեսուն հազար | 2470022145640000 | 013342670 | 05.08.2032թ. |
| 2 | Գրիգորյան Էլմիրա Նապոլեոնի | Գյուլագարակ | Երեսուն հազար | 2470022145640000 | AV0593942 | 11.01.2033թ. |
| 3 | Կիրակոսյան Արմինակ Գարեգինի | Ամրակից | Երեսուն հազար | 2470022145640000 | 004343430 | 06.02.2025թ. |
| 4 | Դոխոյան Ալեքսանդր Ռենիկի | Գյուլագարակ | Երեսուն հազար | 2470022145640000 | AV0553122 | 08.12.2032թ. |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ 120000 / ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆ ՀԱԶԱՐ/ՀՀ ԴՐԱՄ | | | | | | |

Աշխատակազմի քարտուղար՝ Մերինե Լալբանդյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 127 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,«Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ և 68-րդ հոդվածներով,«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով,հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը,Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ հավանություն համայնքային սեփականություն հանդիսացող հողերը վարձակալության տալուն

1) 1.35374 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, 1 /մեկ/ լոտով ծածկագիր 06-093-0116-0028 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 3000/ երեք հազար / ՀՀ դրամ:

2) 2.98399 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք, 2 /երկու/ լոտով ծածկագիր 06-093-0151-0029 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 25000/քսանհինգ հազար / ՀՀ դրամ:

3) 0.62881 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք, 3 /երեք/ լոտով ծածկագիր 06-027-0125-0001 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 30000 / երեսուն հազար / ՀՀ դրամ:

4) 1.67451 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք, 4 /չորս/ լոտով ծածկագիր 06-029-0128-0376 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 25000 / քսանհինգ հազար / ՀՀ դրամ:

5) 1.33692 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, 5 /հինգ/ լոտով ծածկագիր 06-029-0124-0003 25 տարի ժամկետով մեկնարկային գինը 25 000/ քսանհինգ հազար / ՀՀ դրամ:

6) 0.53915 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, 6 /վեց/ լոտով ծածկագիր 06-104-0113-0004 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 5000/ հինգ հազար / ՀՀ դրամ:

2.Աճուրդ վաճառքով օտարելուն

1) 1/մեկ/ լոտով 0,08176 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝գյուղատնտեսական գործառնական նշանակությունը՝ վարելահող, ծածկագիր 06-027-0145-0020, մեկնարկային գինը 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

2) 2/երկու/ լոտով 0,166 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական գործառնական նշանակությունը՝ խոտհարք, ծածկագիր 06-029-0141-0018, մեկնարկային գինը 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

3) 3/երեք/ լոտով 0.31623 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական գործառնական նշանակությունը՝ վարելահող, ծածկագիր 06-029-0132-0010, մեկնարկային գինը 1500000/մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

4) 4/չորս/ լոտով 0.22819 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, ծածկագիր 06-029-0132-0009, մեկնարկային գինը 1200000/մեկ միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

5) 5/հինգ/ լոտով 0.47005 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, ծածկագիր 06-029-0132-0008, մեկնարկային գինը 2000000/երկու միլիոն / ՀՀ դրամ:

6) 6 /վեց/ լոտով 0.10504 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք, ծածկագիր 06-029-0128-0375, մեկնարկային գինը 130000/մեկ հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ:

7) 7/յոթ/ լոտով 0.17135 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, ծածկագիր 06-013-0013-0036, մեկնարկային գինը 500000/ հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

8) 8/ութ/ լոտով 0.51899 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, ծածկագիր 06-062-0116-0002, մեկնարկային գինը 500000/ հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

9) 9 /ինը/ լոտով 0.25419 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք, ծածկագիր 06-062-0112-0019, մեկնարկային գինը 124000/մեկ հարյուր քսանչորս հազար/ ՀՀ դրամ:

10) 10/տաս/ լոտով 0.16717 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, ծածկագիր 06-057-0074-0027, մեկնարկային գինը 500000/ հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

11) 11/տասնմեկ/ լոտով 0.03406 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք, ծածկագիր 06-057-0120-0008, մեկնարկային գինը 70000/յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:

12) 12/տասներկու/ լոտով 0.17691 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք, ծածկագիր 06-057-0144-0018, մեկնարկային գինը 92000/իննսուներկու հազար/ ՀՀ դրամ:

13) 13/տասներեք/ լոտով 0.70227 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք, ծածկագիր 06-057-0100-0025 մեկնարկային գինը 363500/երեք հարյուր վաթսուներեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (8) | Դեմ (0) | Ձեռնպահ (5) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | [signature] | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | [signature] | — | — | — |
| Սարգսյան Աիդա | [signature] | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | [signature] | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | [signature] | — | — | — |
| Պառավյան Գոհար | [signature] | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | [signature] | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | [signature] | — | — | — |
| Այվազյան Վրույր | — | — | [signature] | — |
| Գևորգյան Համլետ | — | — | [signature] | — |
| Քալաշյան Վարսենիկ | — | — | [signature] | — |
| Թորոսյան Հրայր | — | — | — | բացակա |
| Տոնոյան Արփյուն | — | — | [signature] | — |
| Գրիգորյան Թամարա | — | — | [signature] | — |
| Սարգսյան Ալիկ | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 128 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՎԱՐԴԱԲԼՈՒՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով ,Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի «Վարդաբլուրի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի աշխատակիցների 2024 թվականի հաստիքացուցակը համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու «ՎԱՐԴԱԲԼՈՒՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների 2023 թվականի հաստիքացուցակը հաստատելու մասին թիվ 21-Ա որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (13) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | | — | — | — |
| Սարգսյան Ահդա | | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | | — | — | — |
| Պառավյան Գոհար | | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | | — | — | — |
| Այվազյան Վրույր | | — | — | — |
| Գևորգյան Համլետ | | — | — | — |
| Քալաշյան Վարսենիկ | | — | — | — |
| Թորոսյան Հրայր | | — | — | բացակա |
| Տոնոյան Արփյում | | — | — | — |
| Գրիգորյան Թամարա | | — | — | — |
| Սարգսյան Ալիկ | | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբեր 11 -ի թիվ 128-Ա որոշման

<< Վարդաբլուրի բժշկական ամբուլատորիա >> ՀՈԱԿ-ի
աշխատողների հաստիքացուցակ
2024թ. համար

| N | Պաշտոնի անվանումը | Հաստիքի միավորը | Ֆիզիկական անձ | Ներքին համատեղություն |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 0.5 | 1 | |
| 2 | Ընտանեկան բժիշկ Արմինե Ղարաջյան | 1.0 (ըստ կցագրված բնակչության թվի) | | 1 |
| 3 | Ընտանեկան բժիշկ Գայանե Վանյան | 1.0 (ըստ կցագրված բնակչության թվի) | 1 | |
| 4 | Ընտանեկան բուժքույր | 1.0 | 1 | |
| 5 | Դեղագործ | 1.0 | 1 | |
| 6 | Տեղամասային մանկական բուժքույր | 1.0 | 1 | |
| 7 | Իմունոլոգիական կաբինետի բուժքույր | 0.5 | 0 | |
| 8 | ԲՄԿ-ի բուժքույր | 3 | 3 | |
| 9 | Հաշվապահ | 1.0 | 1 | |
| 10 | Օպերատոր | 1.0 | 2 | |
| 11 | հավաքարար | 0.5 | 1 | |
| | Ընդամենը | 11,5 | 12 | 1 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 129 -Ն

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.4-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 4.1-րդ, 4.2-րդ, 6-րդ, 8-12-րդ, 17-րդ, 20-րդ կետերով

**համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Գյուլագարակ համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին»

1. Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (11) | Դեմ (0) | Ձեռնպահ (2) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | | — | — | — |
| Սարգսյան Աիդա | | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | | — | — | — |
| Պատավյան Գոհար | | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | | — | — | — |
| Այվազյան Վրույր | | — | — | — |
| Գևորգյան Համլետ | | — | — | — |
| Ղալաչյան Վարսենիկ | | — | — | — |
| Թորոսյան Հրայր | — | — | — | բացակա |
| Տոնոյան Արտյոմ | — | — | — | բացակա |
| Գրիգորյան Թամարա | — | — | | — |
| Սարգսյան Ալիկ | — | — | | — |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հաստատված է
ՀՀ Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 11 -ի թիվ 129- Ն որոշման

**ԿԱՐԳ**

**ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված հեղուկ վառելիքի վաճառքի, սեղմված բնական գազի վաճառքի, հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի, խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու, ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման, առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու, հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման, քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվությունների (այսուհետ՝ թույլտվություն) տրամադրման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Թույլտվությունը տրամադրվում է իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին (ֆիզիկական անձանց) (այսուհետ՝ դիմումատու) Գյուլագարակ համայնքի ղեկավարի կողմից:

3. Թույլտվություն ստանալու համար դիմումատուն Գյուլագարակ համայնքի ղեկավարին ներկայացնում է էլեկտրոնային կամ թղթային եղանակով՝ N 1 ձևին համապատասխան դիմում, որին կից ներկայացվում են.

1) Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն

2) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական ռեգիստրի գրանցման քաղվածքը.

3) տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը.

4) Օրենքով, իրավական ակտերով անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

5) հասարակական նշանակության շենքի կամ շինության նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճեն,

6) առևտրի կենտրոնում գործունեություն իրականացնող հայտատուի դեպքում՝ առևտրի կենտրոնի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պատճեն և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված առևտրի իրականացման վայրի վաճառատեղի տրամադրման տիպային պայմանագրի ձևով կողմերի միջև կնքված պայմանագրի պատճեն:

4. Բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվություն ստանալու համար դիմումին կից ներկայացվում է քննարկվող տարածքի լուսանկարը.

5. Արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն ստանալու համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, սույն կարգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերին կից ներկայացվում է նաև.

1) համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի միջոցի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը, գովազդի տեղադրման ձևը (վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները, իսկ դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համաձայնությունը:

6. Քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվություն ստանալու համար սույն կարգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերին կից ներկայացվում է նաև.

1) բժշկի որակավորում ունեցող աշխատակցի աշխատանքային պայմանագրի կամ Գյուլագարակ համայնքում գործող բժշկական հաստատության հետ կնքված համապատաս-խան պայմանագրի պատճեն:

7. Համայնքի տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվություն ստանալու համար սույն կարգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերին կից (բացառությամբ 5-րդ և 6-րդ ենթակետերի) ներակայացվում է նաև.

8. Համայնքի կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվություն ստանալու համար սույն կարգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերին կից (բացառությամբ 5-րդ և 6-րդ ենթակետերի) ներկայացվում է նաև.

1) ապրանքային նշանի վկայագրի պատճեն՝ համայնքի կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշանում օգտագործելու դեպքում.

9. Հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 01-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 01-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվություն ստանալու համար սույն կարգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերին կից (բացառությամբ 5-րդ և 6-րդ ենթակետերի) ներկայացվում է նաև.

1) Գյուլագարակ համայնքին պատկանող ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 01-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 01-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար Գյուլագարակ համայնքի ղեկավարի և հայտատուի միջև կնքված համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագրի պատճենը:

10. Դիմումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուին տրվում է համապատասխան թույլտվություն կամ դիմումը մերժվում է:

11. Դիմումը մերժվում է, եթե՝ սույն կարգի 3-4-րդ կետերով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են թերի (այդ թվում՝ տեղական տուրքի գումարը վճարվել է Գյուլագարակ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված դրույքաչափից պակաս) և դրա մասին դիմումատուին տեղեկացնելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս կողմից դրանք չեն համալրվել:

12. Դիմումը մերժելու դեպքում տեղական տուրքի վճարված գումարը վերադարձվում է օրենքով սահմանված կարգով:

13. Թույլտվությունը չի կարող դիմումատուի կողմից փոխանցվել այլ անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կամ օգտագործվել այլ անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կողմից:

14. Թույլտվությունն ստանալուց հետո թույլտվություն ստացած անձը պարտավոր է իր գործունեությունը կազմակերպել և իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽՆԱԶԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 130 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղեկան տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով՝ Գյուլագարակ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողներ հաշվառման կարգը ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (12) | Դեմ (0) | Ձեռնպահ (1) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | [signature] | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | [signature] | — | — | — |
| Սարգսյան Արդա | [signature] | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | [signature] | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | [signature] | — | — | — |
| Պառավյան Գոհար | [signature] | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | [signature] | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | [signature] | — | — | — |
| Այվազյան Վրույր | [signature] | — | — | — |
| Գևորգյան Համլետ | [signature] | — | — | — |
| Քալաշյան Վարսենիկ | [signature] | — | — | — |
| Թորոսյան Հրայր | — | — | — | բացակա |
| Տոնոյան Արփյոմ | — | — | [signature] | — |
| Գրիգորյան Թամարա | [signature] | — | — | — |
| Սարգսյան Ալիկ | | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված
Գյուլագարակ համայնքի ավագանու
«11» դեկտեմբերի 2023թ.
թիվ 130-Ն որոշման

# ԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում (այսուհետ՝ համայնք) տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման գործընթացը, հաշվառման գրանցամատյանների վարման կարգը, գրանցամատյանների ձևերը:

1. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառումն իրականացվում է տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյաններում (այսուհետ՝գրանցամատյան), որոնք վարվում են ըստ տեղական տուրքերի և վճարների առանձին տեսակների:
2. Գրանցամատյանները դասակարգվում են՝
    - Տեղական տուրք վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 1),
    - Տեղական վճար վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 2),
    - Տեղական տուրք վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշվառման գրանցամատյաններ (Ձև 3),
    - Տեղական վճար վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշվառման գրանցամատյան (Ձև 4),
3. Գրանցամատյանները վարվում են Գյուլագարակ համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համապատասխան ոլորտի աշխատակիցների պատասխանատվությամբ:
4. Գրանցամատյանները վարվում են ըստ տարիների:
5. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները վարվում եմ էլեկտրոնային եղանակով:

6. Գրանցամատյաններ կարող են վարվել նաև այն համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում (ՀՈԱԿ), որտեղ գանձվում է տուրք և (կամ) վճար:

7. ՀՈԱԿ-ներում տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարվող գրանցամատյանները ստորագրվում են տնօրենի կողմից և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմին:

8. Գրանցամատյանների Ձև 1-ը,Ձև 2-ը, Ձև 3-ը, Ձև 4-ը կցվում են:

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Խ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 131 -Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով՝Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է․

**1.** Հաստատել Գյուլագարակ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և վճարման կարգը՝ համաձայն հավելվածի:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (12) | Դեմ (0) | Ձեռնպահ (2) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | | — | — | — |
| Սարգսյան Արդա | | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | | — | — | — |
| Պառավյան Գոհար | | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | | — | — | — |
| Այվազյան Վրույր | | — | — | — |
| Գևորգյան Համլետ | | — | — | — |
| Քալաշյան Վարսենիկ | | — | — | — |
| Թորոսյան Հրայր | — | — | | բացակա |
| Տոնոյան Արտյոմ | | — | | — |
| Գրիգորյան Թամարա | | — | — | — |
| Սարգսյան Ալիկ | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հաստատված է

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու
2023թ. դեկտեմբերի 11-ի թիվ 131-Ն որոշման

# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Գյուլագարակ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի վճարման հետ կապված հարաբերությունները:

2. Աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի վճարման համար հիմք է հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Գյուլագարակ համայնքի ավագանու որոշումը:

3. Սույն կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

## **II. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը**

4. Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված անձինք:

5. Աղբահանության վճար վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց հաշվառումն իրականացվում է էլեկտրոնային կարգով վարվող գրանցամատյանների միջոցով:

6. Ֆիզիկական անձանց կողմից վճարվող աղբահանության վճարի հաշվառումը իրականացվում է վարչական ղեկավարների կողմից, որոնք փաստացի բնակվողների թվից ելնելով յուրաքանչյուր ամսվա համար կատարում են աղբահանության վճարի հաշվարկ և լրացնում են գրանցամատյանում: Համայնքապետարանի ֆինանսական ծառայության աշխատակիցների կողմից յուրաքանչյուր օրվա վճարումների վերաբերյալ տվյալները ամենօրյա կտրվածքով էլեկտրոնային կարգով ներկայացվում են վարչական ղեկավարներին, որոնց կողմից այդ տվյալները նույնպես լրացվում են գրանցամատյանում: Յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը, վարչական ղեկավարների կողմից լրացված գրանցամատյանները էլեկտրոնային կարգով ներկայացվում են համայնքապետարանի ֆինանսական ծառայություն, որի կողմից ստուգվում, ճշգրտվում և ամփոփվում են բոլոր տվյալները և մուտքագրվում են ընդհանուր գրանցամատյան:

## **III. Աղբահանության վճարի հաշվարկումը**

7. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

8. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

9. Համայնքի ավագանու կողմից յուրաքանչյուր տարի հաստատվում են աղբահանության վճարի դրույքաչափերը ըստ հետևյալ տեսակների.

1) Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար

2) Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի.

2.1. Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինություններ

2.2. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինություններ

2.3. Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինություններ

2.4.Գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինություններ

2.5. Արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինություններ (այդ թվում՝ ավտոկայանատեղի)

2.6. Շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն կետի 1-5-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սահմանված դրույքաչափով.

2.7. Շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սահմանված դրույքաչափով:

2.8. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրեր

2.9. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

2.10. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն բաժնի 8-րդ կետի 1-5 ենթակետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝ ըստ ծավալի:

## IV. Աղբահանության վճարի հաշվարկման և վճարման ժամկետները

10. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

## V. Այլ դրույթներ

11. Աղբահանության վճար վճարողների գրանցամատյանի վարման ճշտության համար պատասխանատու են վարչական ղեկավարները և համայնքապետարանի ֆինանսական ծառայության աշխատակիցները՝ յուրաքանչյուրը սույն կարգով սահմանված իրեն վերապահված գործառույթների մասով:

12. Գյուլագարակ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի վճարման աշխատանքների ընդհանուր վերահսկողությունը իրականացվում է պաշտոնի անձնագրով իրենց լիազորությունների սահմանում երկրորդ կարգի մասնագետների կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 132 -Ն

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 10-րդ հոդվածի պահանջները Գյուլագարկ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (12) | Դեմ (0) | Ձեռնպահ (1) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | [signature] | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | [signature] | — | — | — |
| Սարգսյան Աիդա | [signature] | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | [signature] | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | [signature] | — | — | — |
| Պառավյան Գոհար | [signature] | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | [signature] | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | [signature] | — | — | — |
| Այվազյան Վրույր | [signature] | — | — | — |
| Գևորգյան Համլետ | [signature] | — | — | — |
| Քալաշյան Վարսենիկ | [signature] | — | — | — |
| Թորոսյան Հրայր | — | — | — | բացակա |
| Տոնոյան Արփյում | — | — | [signature] | — |
| Գրիգորյան Թամարա | [signature] | — | — | — |
| Սարգսյան Ալիկ | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված
Հաստատված է
ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու
2023թ. դեկտեմբերի 11-ի № 132 - Ն որոշման

# ԿԱՆՈՆՆԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում գտնվող բոլոր տեսակի իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հանրային սննդի կազմակերպման ու իրականացման կանոնները:

2. Սույն կանոններում օգտագործվող հասկացություններն են՝

**Հանրային սնունդ** (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում,

**Հանրային սննդի ծառայություն**՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջնե-րի բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր,

**Խոհարարական արտադրանք**՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակ-ների և կիսապատրաստվածքների համախումբ,

**Ճաշացուցակ**՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի, հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգ-վածի գնի նշումով,

**Հանրային սննդի օբյեկտներ**՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կա-ռուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր,

**Վաճառող**՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կա-տարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմա-կերպման ուղղությամբ:

3. Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝

ա/ ճաշարաններ.

բ/ ռեստորաններ.

գ/ սրճարաններ.

դ/ բարեր.

ե/ բուֆետներ.

զ/ խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ:

4. Հանրային սննդի կազմակերպման և իրացման համար իրավաբանական անձինք կամ ան-հատ ձեռնարկատերերը պարտավոր են ստանալ թույլտվություն, որը տրվում է համայնքի ղեկա-վարի որոշմամբ, համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

5. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահոված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրա-կանացնելու համար նախատեսված գույքով:

6. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տա-նող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցակներ, սանհանգույցներ:

7. Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառք՝ համայնքի ղեկավարի կողմից անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց տըր-ված թույլտվության դեպքում:

8. Թույլտվությունը տրվում է յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

9. Ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպու-թյուններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրա-ցումը:

10. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահոված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

11. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահոված լինի տեսակը հաստատված և ստուգա-չափված չափման միջոցներով:

12. Օրենքով սահմանված շինությունների ներսում հանրային սննդի և զվարճանքի օբյեկտ-ներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի որոշ-մամբ՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը յուրաքանչյուր օբյեկ-տի համար առանձին վճարելու դեպքում:

13. Համայնքի տարածքում տեղակայված հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն չի տրվում:

14. Վաճառողն ինքնուրույն է որոշում սպառողներին սպասարկելու ձևերը և մեթոդները:

15. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին (գնորդին):

16. Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և վերջինիս այն գինը, որ ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման:

17. Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և ազգային ստանդարտին հա-մապատասխան պաշտոնի նշմամբ:

18. Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ իր լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարի նշմամբ:

19. Անվանաքարտ կրում են համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտի աշխատողները՝ աշխատավայրում գտնվելու ժամանակահատվածում:

20. Անվանաքարտն աշխատողին տրվում է աշխատանքի ընդունման հրամանի հետ կամ աշխատանքային պարտականությունների անցման պահին:

21. Անվանաքարտի վրա հայերեն տպագիր տառերով լրացվում է՝

ա) կազմակերպության ֆիրմային անվանումը,

բ) աշխատողի անունը, ազգանունը,

գ) աշխատողի զբաղեցրած պաշտոնը:

22. Անվանաքարտը պետք է պարունակի աշխատողի գունավոր լուսանկարը՝ նվազագույնը 30մմ x 40մմ չափսերով:

23. Անվանաքարտը վավերացվում է գործատուի ստորագրությամբ և կնիքով:

24. Անվանաքարտը աշխատողը կրում է իր արտահագուստի կամ հագուստի վրա, կամ այն դրվում է արտահագուստի վրա թափանցիկ նյութից կարված գրպանիկի մեջ:

25. Անվանաքարտ կրելու կարգը սահմանված է «Հայաստանի Հանրապետության տարած-քում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում անվանաքարտ կրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 29 օգոստոսի 2005 թվական N 182-Ն որոշմամբ:

26. Վաճառողն ապահովում է հանրային սննդի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստ կրելը:

27. Աշխատողներից խոհարարը, հրուշակագործը պետք է ունենան համապատասխան մաս-նագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկա-յական:

28. Մասնագիտական պատրաստվածության ծրագրերը համաձայնեցվում են կրթության, ինչ-պես նաև առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան լիազոր մարմինների հետ:

29. Մատուցողի ներկայացրած հաշվում (որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում են նրա ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհա-րարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվա-նումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:

30. Հանրային սննդի ոլորտին վերաբերվող այն նորմերը, որոնք սահմանված չեն սույն կա-նոններով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով:

31. Սույն կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է համայ-նքի ղեկավարի հանձնարարությամբ՝ համայնքապետարանի աշխատակազմի միջոցով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ լիազոր տեսչական մարմնի միջոցով:

32. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՅՈՒՂԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրեն-քի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի՝ համայնքի ավագանին սահմանում է համայնքի վարչա-կան տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները: «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը սահմա-նում է Հայաստանի Հանրապետության համայնքներում տեղական տուրքերի տեսակները:

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրեն-քի վերը մեջբերված հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի՝ որպես տեղական տուրքի տեսակ է սահման-ված հետևյալը. «համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրակա-նացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտե-սավարող գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման իրականացման թույլտվության համար»:

Հարկ է նկատել, որ օրենսդիրը համայնքի ավագանու մասով առաջին հերթին սահմանել է իմպերատիվ պարտավորություն, որով վերջինս պետք է սահմանի համայնքի վարչական տարած-քում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները:

Միաժամանակ, համայնքի ավագանին, հիմք ընդունելով իր կողմից նախապես սահմանված հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները, սահմանում է առանձին տեղա-կան տուրքի տեսակ՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար:

Օրենսդրական վերը մեջբերված կառուցակարգերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ար-ձանագրելու, որ համայնքի ղեկավարի կողմից համայնքի տարածքում գործունեություն իրակա-նացնող տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվող թույլտվությունները, մասնավորապե՝ հանրային սննդի կազմակերպման և իրականացման գործունեության մասով, պետք է հիմնված լինեն բացառապես ավագանու կողմից սահմանված համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանող որոշման վրա:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ սույն որոշման իրավակիրառական նշանակությունը բա-վականին մեծ է համայնքների կայուն կենսագործման, մասնավորապես՝ տնտեսական գործու-նեության ապահովման համատեքստում: Ըստ էության, սույն հիմնավորումից բխող համայնքի ավագանու որոշման նախագիծը սահմանում է համայնքի տարածքում հանրային սննդի կազմա-կերպման և իրականացման հիմնական վարքագծի կանոնները, որոնք իրենց հերթին «գալիս են թելադրելու» համայնքի ղեկավարի՝ այդ բնագավառում իրականացվելիք վարչարարական բնույ-թի գործողությունների ուղղությունները և շրջանակը:

«Գյուղագարակ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրակա-նացման կանոնները սահմանելու մասին» Գյուղագարակ համայնքի ավագանու որոշման նախագծով առաջարկվում է սահմանել.

- Այն հիմնական հասկացությունները, որոնք բխում են «Առևտրի և ծառայությունների մա-սին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի կարգավորումներից.
- Հանրային սննդի օբյեկտները դասակարգումը.
- Հանրային սննդի ծառայություններ մատուցող կազմակերպությունների տեսակները.
- Հանրային սննդի օբյեկտի վաճառողին և աշխատողին ներկայացվող պահանջները.
- Հանրային սննդի կազմակերպման և իրականացման գործընթացի նկատմամբ վերահսկողության և պատասխանատվության հետ կապված կարգավորումները և այլն:

Սույն որոշման ընդունման արդյունքում, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով կկարգավորվի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման հետ կապված ընթացակարգային բնույթի իրավահարաբերությունները, միաժամանակ, կստեղծվեն օրենսդրական հիմքեր համայնքիի ղեկավարի համար, համայնքի տարածքում հան-րային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություններ տրամադրելու մասով:

Բացի իրավական կարգավորումների սահմանման անհրաժեշտությունից, սույն որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև համայնքում տնտեսական գործունեու-թյան խրախուսման և կանոնակարգման անհրաժեշտությամբ:

Սույն հիմնավորումից բխող համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունումը միտված է նաև ապահովելու «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով սահմանված մի շարք համայնքի պարտադիր խնդիրների լուծմանը, մասնավորապես նկատի ունենալով հետևյալ պարտադիր խնդիրները

- Համայնքի կայուն զարգացումը.
- Գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՅՈՒՂԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԳՅՈՒՂԱԳԱՐԱԿՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին» Գյուլագարակ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՅՈՒՂԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԳՅՈՒՂԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՂԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին» Գյուլագարակ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Գյուլագարակ համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________________/ Խ. Վարդանյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 133 -Ն

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ, ԸՍՏ ԴՐԱՆՑ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՆԴՈՐՐՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԺԱՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40.1-րդ կետի, Գյուլագարակ համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Գյուլագարակ համայնքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու համար սահմանել՝

1) բնակելի տներից (կամ) ոչ բնակելի տարածքներից, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառա-վարման մարմինների վարչական շենքերից, բժշկական հաստատությունների տարածքներից մինչև 100 մետր հեռավորության վրա՝ ժամը 22.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 7.00-ն ընկած ժամանակահատվածը,

2) բնակելի տներից (կամ) ոչ բնակելի տարածքներից, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառա-վարման մարմինների վարչական շենքերից, բժշկական հաստատությունների տարածքներից մինչև 100-1000 մետր հեռավորության վրա՝ ժամը 23.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 7.00-ն ընկած ժամանակահատվածը,

3) բնակելի տներից (կամ) ոչ բնակելի տարածքներից, բնակելի տներից, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառա-վարման մարմինների վարչական շենքերից, բժշկական հաստատությունների տարածքներից 1000 մետր և ավելի հեռավորության վրա՝ ժամը 24.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 7.00-ն ընկած ժամանակահատվածը:

2. Սույն որոշման իմաստով առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրակա-նացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրը խախտող գործողություններ են ցանկա-ցած գործողություն, որը աղմուկ է առաջացնում և խանգարում է քաղաքացիների լիակատար հան-գստությունը, ներառյալ անձնական գործողությունները, մեխանիկական միջոցների և տեխնիկական միջոցների գործողությունները, այդ թվում՝ հրատեխնիկական արտադրանքի, ներառյալ հրավառու-թյան օգտագործումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (9) | Դեմ (0) | Ձեռնպահ (4) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | | — | — | — |
| Սարգսյան Աիդա | | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | | — | — | — |
| Պատավյան Գոհար | | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | | — | — | — |
| Այվազյան Վրույր | — | — | | — |
| Գևորգյան Համլետ | — | — | | — |
| Քալաշյան Վարսենիկ | — | — | | — |
| Թորոսյան Հրայր | — | — | | բացակա |
| Տոնոյան Արտյոմ | — | — | | — |
| Գրիգորյան Թամարա | | — | — | — |
| Սարգսյան Ալիկ | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 134 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետով և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.3-րդ հոդվածի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է .

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | | — | — | — |
| Սարգսյան Աիդա | | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | | — | — | — |
| Պառավյան Գոհար | | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | | — | — | — |
| Այվազյան Վրույր | | — | — | — |
| Գևորգյան Համլետ | | — | — | — |
| Քալաշյան Վարսենիկ | | — | — | — |
| Թորոսյան Հրայր | | — | | բացակա |
| Տոնոյան Արփյոմ | — | — | | — |
| Գրիգորյան Թամարա | | | | |
| Սարգսյան Ալիկ | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված
Հաստատված է
ՀՀ Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2023թ. դեկտեմբերի 11-ի N 134 -Ն որոշմ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Սույն հավելվածով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայ-մանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները:

2. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների գործունեության թույլտվությունը տրամադրում կամ մերժում է Գյուլագարակ համայնքի ղեկավարը:

3. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները բազմաբնակարան շենքի բնակելի և (կա ոչ բնակելի, անհատական բնակելի տների, կրթական և մշակութային հաս-տատությունների, պետակա տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շեն-քերի, մարզական և սոցիալակա կազմակերպությունների, բժշկական հաստատությունների, այլ հիմնարկների, գրասենյակների ու հաստատությունների, հյուրանոցների, հանրային սննդի օբյեկտների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերի, զբոսայգիների, այգիների, պու-րակների, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերի տարածքներում տե-ղակայելն արգելվում է:

4. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները՝ կարաոկե, դիսկոտեկ, հեստա-պարային ակումբ, բաղնիք, շոգեբաղնիք, սաունա, մերսման սրահ (բացառությամբ բուժական մերսման սրահների) Գյուլագարակ համայնքում պետք է տեղակայվեն՝

1) **կարաոկե՝** սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ, որտեղ հաճախորդը, օգ-տագործելո նախապես ընտրված երգի ինտերակտիվ նվագակցությունը, ցուցադրում է սիրո-ղական երգեցողությո սույն հավելվածի 3-րդ կետում նշված տարածքներից՝ ոչ պակաս, քան 50 մետր հեռավորության վրա:

2) **դիսկոտեկ՝** սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ, որտեղ բարդ ձայնային և լուսավորման համակարգերի ներքո, մշտական պարահրապարակի առկայությամբ, ինչպես նաև վերարտադրված երաժշտության մատուցմամբ, կազմակերպվում են պարային միջոցա-ռումներ՝ սույն հավելվածի 3-րդ կետում նշված տարածքներից՝ ոչ պակաս, քան 50 մետր հեռա-վորության վրա:

3) **հեստապարային ակումբ՝** սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ, որտեղ կազմակերպվում է հեստապար, հեստապար՝ պարերով և (կամ) երաժշտությամբ ուղեկցվող բեմական ներկայացում, որի մասնակիցները ներկայացման ընթացքում աստիճանաբար մա-սամբ կամ լրիվ մերկանում են՝ սույն հավելվածի 3-րդ կետում նշված տարածքներից՝ ոչ պա-կաս, քան 100 մետր հեռավորության վրա:

4) **բաղնիք, սաունա և շոգեբաղնիք՝** «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասի Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված հյուրանո-ցային տնտեսությա օբյեկտների մաս չկազմող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ՝ սույն հավելվածի 3-րդ կետում նշված տարածքներից՝ ոչ պակաս, քան 20 մետր հեռա-վորության վրա:

5) **մերսման սրահ՝** սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ, որտեղ մկանային լարվածությունը թուլացնելու նպատակով մերսողի ձեռքերի կամ հատուկ սարքերի միջոցով մեխանիկական և չափավոր ազդեցություն է ներգործվում մարդու մարմնի վրա՝ սույն հավե-լվածի 3-րդ կետում նշված տարածքներից՝ ոչ պակաս, քան 20 մետր հեռավորության վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 135 -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ /12/ | Դեմ /0/ | Ձեռնպահ /1/ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | [signature] | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | [signature] | — | — | — |
| Սարգսյան Աիդա | [signature] | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | [signature] | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | [signature] | — | — | — |
| Պառավյան Գոհար | [signature] | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | [signature] | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | [signature] | — | — | — |
| Այվազյան Վրույր | [signature] | — | — | — |
| Գևորգյան Համլետ | [signature] | — | — | — |
| Քալաշյան Վարսենիկ | [signature] | — | — | — |
| Թորոսյան Հրայր | — | — | — | բացակա |
| Տոնոյան Արտյոմ | — | — | [signature] | — |
| Գրիգորյան Թամարա | [signature] | — | — | |
| Սարգսյան Ալիկ | | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 11-ի
N 135-Ն որոշմա

## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույնով սահմանվում են Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղա-քացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականաց-ման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին (այսուհետ՝ քա-ղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահ) ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները:

1. Քաղաքացիական հոգեհանգստի ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցե-լու թույլտվություն տալիս է Գյուլագարակի համայնքապետը՝ ընթացիկ տարվա տեղական տուրքի վճարման անդորրագ հիման վրա, եթե քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը թույլտվության տրամադրմ պահին (ինչպես առաջին, այնպես էլ հաջորդ անգամ) համապատասխանում է սույն հավելվածով սահմանված սահմանափակումներին, պահանջնե-րին և պայմաններին:

2. Առանց թույլտվության քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարու-թյան ծառայությունների իրականացումը և (կամ) մատուցումը առաջացնում է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատես-ված վարչական պատասխանատվություն:

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍՐԱՀՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները կարող են գտնվել՝

1) ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալակ կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, հյուրանոցներից, բազմա-բնակարա շենքերից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմին-ների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներ-կայացուցչությունների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից, հանրային սննդի օբյեկտներից նվազագույնը 100մ, իսկ անհատական բնակելի տներից նվազագույնը 70մ հեռավորության վրա բացառությամբ, եթե դրանք գտնվելու են՝

ա. հիվանդանոցներում գործող ախտաբանաանատոմիական բաժիններում կամ բաժան-մունքներում, կամ

բ. գերեզմանատների զբաղեցված հողամասի սահմանից մինչև 50մ հեռավորության վրա, կամ

գ. միայն անհատական բնակելի տներից և (կամ) հանրային սննդի օբյեկտներից մինչև սույն կետի առաջի ենթակետում նշված հեռավորությունների վրա և առկա է դրանց սեփա-կանատերերի գրավ համաձայնությունը

3. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է բավարարեն հետևյ պահանջներին և պայմաններին՝

1) Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է ունենան՝

ա. նախասրահ՝ հանդերձարանով,

բ. հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակ,

գ. շուրջօրյա աշխատանքային ռեժիմով դիակների պահման համար առանձնացված վայր (տարածք),

դ. սանհանգույց (առնվազն 2 հատ, որից մեկը պետք է մատչելի լինի տեղաշարժման դժվա-րություններ ունեցող անձանց համար),

ե. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված առաջին բժշկական օգնության համար անհրաժեշտ դեղորայքով և կահավորմամբ սենյակ,

զ. հուղարկավորությանը մասնակցողների ընդունման համար նախատեսված առանձին մուտք գրասենյակային տարածք,

դժվարություններ ունեցող անձանց համար՝ առնվազն մինչև հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակ, զուգարան և առաջին բժշկա-կան օգնության սենյակ մուտք գործելու համար,

3) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահում հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված երկու և ավելի սենյակի առկայության դեպ-քում յուրաքանչյուրը պետք է ունենա առանձին մուտք, նախասրահ, սանհանգույցներ,

4) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահով զբաղեցված և դրա սպա-սարկման համա անհրաժեշտ հողատարածքը՝ ներառյալ սույն կետի 6-րդ ենթակետով նախատեսված տարածքը պետք ունենա առնվազն երկու մետր բարձրությամբ անթափանց նյութերով կառուցված ցանկապատ կա պարիսպ:

Ընդ որում քաղաքացիական հոգեհանգստի իրականացման ծառայությունները իրակա-նացվում և (կամ) մատուցվում են միայն սրահի ցանկապատված տարածքում այնպես, որ սրահի տարածքից դուրս գտնվող անձանց համար սգո պարագաները, այդ թվում՝ ծաղիկները և ծաղկեպսակները տեսանելի չլինեն՝ բացառությամբ ավտոկայանատեղիի,

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան և հասցեի նշմամբ ցուցանակներ, ընդ որում ցու-ցանակները պետք է լինեն լուսավորված,

6) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահի տարածքը պետք է ունենա յուրաքանչյու հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված մեկ սենյակի հաշվարկ առնվազն 20 ավտոմեքենայի համար նախատեսված կայանատեղ,

7) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահին կից պետք է լինի հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված մեկ սենյակի հաշվարկով առնվազն 100 քմ մակերեսով տարածք՝ քաղաքացիական հոգեհանգստի արարողությանը մասնակցող անձանց գտնվելու համար՝ ապահովված աղբամաններով, լուսավորությամբ և ծխելու համար նախատեսված (առանձնացված) հատվածով,

8) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը պետք է ունենա ջեռուցման, հովացման, օդափոխության, իսկ հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակում նաև երաժշտության ձայնային համակարգեր,

9) քաղաքացիական հոգեհանգստի սրահը շահագործողը պետք է ունենա բժշկի որակա-վորում ունեցո աշխատակից կամ համապատասխան պայմանագիր Ալավերդի համայնքում գործող բժշկակա հաստատությունների հետ՝ քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարությա ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման ողջ ժամանակա-հատվածում բժշկի ներկայությունը ապահովելու համար՝ անհրաժեշտության դեպքում առա-ջին բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով,

10) քաղաքացիական հոգեհանգստի սրահի շահագործողը քաղաքացիական հոգեհան-գստի սրահում ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման ընթացքում պետք է ապահովի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված քաղաքաշինա-կան, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ (սանիտարահամաճարակաբանական) նորմե-րի ու կանոնների պահպանումը:

4. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը կարող է ունենալ նաև հոգևո-րականի համար նախատեսված սենյակ, ինչպես նաև առանձին մուտքով ծաղիկների և սգո պարագաների վաճառքի սրահ որի ցուցափեղկերը և մուտքերը պարտադիր պետք է լինեն վարագուրապատված կամ մգավորվա ապակիներով այնպես, որ վաճառվող ապրանքների նմուշները դրսից տեսանելի չլինեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 136 -Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետով, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է .

1. Սահմանել Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Սահմանել Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները՝ համաձայն N2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (12) | Դեմ (0) | Ձեռնպահ (2) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | [ստորագրություն] | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | [ստորագրություն] | — | — | — |
| Սարգսյան Ահդա | [ստորագրություն] | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | [ստորագրություն] | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | [ստորագրություն] | — | — | — |
| Պառավյան Գոհար | [ստորագրություն] | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | [ստորագրություն] | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | [ստորագրություն] | — | — | — |
| Այվազյան Վրույր | [ստորագրություն] | — | — | — |
| Գևորգյան Համլետ | [ստորագրություն] | — | — | — |
| Քալաշյան Վարսենիկ | [ստորագրություն] | — | — | — |
| Թորոսյան Հրայր | — | — | — | բացակա |
| Տոնոյան Արտյոմ | — | — | [ստորագրություն] | — |
| Գրիգորյան Թամարա | [ստորագրություն] | — | — | — |
| Սարգսյան Ալիկ | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [ստորագրություն] /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված N1

ՀՀ Լոռու մարզ
Գյուլագարակ համայնքի ավագանու
2023թ. դեկտեմբերի 11-ի N 136 -Ն որոշման

**ԿԱՐԳ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը (այսուհետ՝ կարգ)։ Սույն կարգն ընդունվել է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան։

2. Արտաքին գովազդն (այսուհետ՝ գովազդ) իրավաբանական կամ ֆիզիկական ան-ձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկատվու-թյունների տարածումն է բնակավայրերում՝ տարբեր տեխնիկական միջոցների օգնությամբ (վահանակների, գրաժապավենների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների և այլնի) անորոշ թվով անձանց շրջանում և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապ-րանքի կամ նախաձեռնությունների նկատմամբ։

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան տեղադրվող ցուցանակների վրա զետեղվող տեղեկատվությունը գովազդ չի համարվում։

4. Սույն կարգը տարածվում է բոլոր այն տարածքների վրա, որտեղ պետք է տեղադրվի գովազդը։

5. Գյուլագարակ համայնքի սեփականություն համարվող հողամասի վրա գովազդի միջոց տեղադրելու համար Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված կարգով, կարգին և պայմաններին համապատասխան, Գյուլագարակ համայնքի ղեկավարին դիմում ներկայացրած գովազդատուին (գովազդակրին) օգտագործման իրավունքով տրամադրվում է հողամաս՝ կնքելով հողօգտագործման համապատասխան պայմանագիր, հետագայում տվյալ կողմի հետ նախապատվության իրավունքով երկարաձգելու պայմանով։

6. Այն դեպքում, երբ գովազդի միջոցը տեղադրվում է համայնքային սեփականություն չհանդիսացող տարածքում (կամ դրանց օգտագործմամբ), ապա գովազդի միջոցի տեղա-դրելու թույլտվության մասին որոշումը ընդունում է համայնքի ղեկավարը՝ տվյալ տարածքի սեփականատիրոջ կամ տարածքի օգտագործողի համաձայնության առկայության դեպ-քում։ Ընդ որում, գովազդատուի և տարածքի սեփականատիրոջ միջև հարաբերություննե-րը կարգավորվում են նրանց միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրով։

7. Գովազդի միջոց տեղադրելու թույլտվության մասին որոշման նախագծին կցվում է գովազդատուի ու տարածքի սեփականատիրոջ միջև կնքված պայմանագրի պատճենը։

8. Գովազդի տեղադրումը թույլատրվում է, եթե այն համապատասխանում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, իսկ դեղերի, բուժտեխնիկայի և բուժա-կան մեթոդների գովազդի դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության կառավարու-թյան 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 1422-Ն որոշման պահանջներին։

2. ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

9. Գյուլագարակ համայնքի տարածքում գովազդ տեղադրելու թույլտվությունը «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն կարգի համաձայն տրվում է Գյուլագարակ համայնքի ղեկավարի որոշմամբ:

10. Համայնքի ղեկավարի որոշմանը կցվում են թույլտվությունը և գովազդի էսքիզը՝ համաձայն սույն կարգին կցված Ձև 1-ի և Ձև 2-ի:

11. Գովազդային միջոց տեղադրելու համար գովազդատուն (գովազդակիրը) դիմում-հայտ է ներկայացնում Գյուլագարակ համայնքի ղեկավարին՝ նշելով իր անունը, ազգանունը, հաշվառման վայրը, գովազդի տեղադրման վայրը և ժամկետը, ինչպես նաև հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները:

12. Հայտին կցվում է համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի միջոցի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը, գովազդի տեղադրման ձևը (վահա-նակ, լուսատախտակ, գրաժապավեն, պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները, իսկ դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համաձայնու-թյունը:

13. Գյուլագարակ համայնքի ղեկավարը գովազդի միջոց տեղադրելու համար գովազդատու-ից (գովազդակրից) դիմում-հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պար-զում է գովազդային միջոցի համապատասխանությունը կարգի և պայմանների պահանջնե-րին (եթե այն թերի է, ետ է վերադարձվում՝ թերությունը վերացնելու և նորից 15-օրյա ժամ-կետում ներկայացնելու համար), և 15 օրվա ընթացքում համայնքի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդ տեղադրելու թույլտվություն, որում նշվում են՝ գովազդատուի (գովազդա-կրի) անվանումը, գովազդի չափերը, տեղադրման ձևը, գովազդային նյութերի անվանումը, թույլտվության գործողության ժամկետը և կցվում է գովազդի էսքիզը:

14. Թույլտվության որոշման նախագծերը նախապատրաստում է Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժինը (առկայության դեպքում) կամ համապատասխան համայնքային պաշտոնատար անձը՝ նախագծին կցելով համապա-տասխան եզրակացությունը:

15. Սույն կարգի 4-րդ կետի համապատասխան՝ հատկացված տարածքի նույն հասցեում գովազդ տեղադրելու համար մեկից ավելի գովազդատուների (գովազդակիրների) հայտե-րի առկայության դեպքում Գյուլագարակ համայնքի ղեկավարը «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հայտարարում և անց է կացնում մրցույթ, որի արդյունքներով մրցույթի հաղթողին տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն:

16. Գովազդի միջոց տեղադրելու վերաբերյալ գովազդատուի (գովազդակրի) դիմում-հայտը 15 օրյա ժամկետում կարող է մերժվել այն դեպքում եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգի և պայմաննե-րի պահանջներին.

2) խախտվում են «Գովազդի մասին», «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

3) գովազդի միջոցի տեղադրմամբ խոչընդոտվում է ճանապարհային երթևեկությունը կամ քաղաքացիների անցուդարձը, խախտվում են այլ անձանց օրենքով պաշտպանված իրավունքներն ու շահերը:

17. Գովազդային միջոց տեղադրելու հայտը մերժելու դեպքում՝ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու հիմքերը:

18. Գովազդային նյութերը գովազդային միջոցների վրա տեղադրելու ժամանակ, ինչպես նաև արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխման դեպքում, գովազդա-տուն (գովազդակիրը) մինչև գովազդային նյութերի տեղադրումը կամ արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխումը, այդ մասին գրավոր տեղեկացնում է Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կից ներկայացնելով համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի էսքիզը, որտեղ նշվում են նաև գովազդի արտաքին չափերը: Գո-վազդի էսքիզը համաձայնեցվում է Գյուլագարակ համայնքի ղեկավարի հետ:

19. Գովազդը պետք է համապատասխանի «Գովազդի մասին», «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, սույն կարգի, պայմանների և այլ իրավական ակտերի պահանջներին:

20. Գովազդի տեղադրման միջոցի մոնտաժային աշխատանքները կատարվում են հայ-տատուի պատվերով՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված և Ալավերդի համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված նախագծով:

21. Գովազդի միջոց տեղադրելու համար գովազդակիրն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում գովազդի տեղադրման միջոցի մոնտաժման ապահովու-թյան և դրա անվթար շահագործման համար:

22. Գովազդատուն (գովազդակիրը) իրավասու չէ գովազդի տեղադրման համար իրեն տրված թույլտվությունը փոխանցել կամ օտարել այլ անձի:

23. Գովազդ տեղադրելու թույլտվության ժամկետը լրանալու, պայմանագրով նախատես-ված հիմքերով այն վաղաժամկետ դադարելու, լուծելու դեպքում գովազդատուն (գովազ-դակիրը) պարտավոր է ողջամիտ ժամկետում իր միջոցներով ապամոնտաժել գովազդը և դրա տեղաբաշխման միջոցները, իսկ զբաղեցրա տարածքը բերել նախկին վիճակին:

24. Սույն կարգով նախատեսված պարտավորությունները գովազդատուի (գովազդա-կրի) կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ալավերդի համայնքի ղեկավարի որոշման համաձայն՝ գովազդի (գովազդային միջոցի) ապամոնտաժումն իրա-կանացվում է համայնքի կողմից՝ օրենքով սահմանված կարգով գովազդատուից (գովազդ-ակրից) ստանալով համապատասխան փոխհատուցում:

## 3. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

25. Գյուլագարակ համայնքի ավագանին համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար գովազդ տեղադրելու թույլտվության մեկ քառակուսի մետրի տեղական տուրքի դրույ-քաչափերը սահմանում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

26. Այն դեպքում, երբ թույլտվության և պայմանագրի գործողության ընթացքում գո-վազդվող տեղեկատվությունը փոփոխվում է, որի համար օրենքով նախատեսված է տեղա-կան տուրքի այլ դրույքաչափ, գովազդատուն (գովազդակիրը) վճարումը կատարում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Գյուլագարակ համայնքի ավագանու կողմից հաստատված համապատասխան դրույքաչափերով:

27. Սույն կարգով նախատեսված հողօգտագործման վճարի չափը սահմանվում է Գյուլագարակ համայնքի ավագանու կողմից:

28. Սույն կարգով համապատասխան վճարված գումարներն ուղղվում են Գյուլագարակ համայնքի բյուջե:

29. Գյուլագարակ համայնքի տարածքում գովազդ տեղադրելու գործընթացի նկատմամբ հսկողությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում է Գյուլագարակ համայնքի ղեկավարը, իսկ գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողու-թյունը՝ Լոռու մարզպետը:

30. Գովազդային օրենսդրության պահանջների խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Հավելված N1

ՀՀ Լոռու մարզի

Գյուլագարակ համայնքի ավագանու
2023թ. դեկտեմբերի 11-ի N 136 -Ն որոշման

# ՊԱՅՄԱՆՆԵՐ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի վարչական տա-րածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները (այսուհետ՝ պայմաններ) մշակվել են «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգին» (այսուհետ՝ կարգ) համապատասխան:

2. Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի (այսուհետ՝ գո-վազդ) միջոցների տեղադրումը թույլատրվում է սույն կարգի և պայմանների պահանջներին համապատասխան:

### 2. ԳՈՎԱԶԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

3. Գովազդի միջոց են համարվում Գյուլագարակի համայնքի տարածքում տեղադրվող գովազդային տեղեկատու կրողները՝ անկախ շենքերի, շինությունների և հողամասերի սեփականության ձևից: Դրանց թվում են վահանակային կայանքները (վահանակները), տանիքային կայանքները, մեծանկարները (պաննո), էկրանները, բարձակները, ցուցատախտակները, շենքերի մուտքերի և պատուհանների հովհարները (մարկիզ), գրաժապավենները (տրանսպարանտ) և այլն:

### 3. ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Գովազդ տեղադրելուն ներկայացվող պահանջները՝

1) գովազդի միջոցները չպետք է՝

ա. խոչընդոտեն ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը, փողոցների ու մայթերի անցմանը, խանգարեն փողոցների ու մայթերի մեքենայացված մա-քրմանը.

բ. սահմանափակեն տեսանելիությանը ավտոճանապարհների վրա.

գ. առաջացնեն երթևեկության մասնակիցների կուրացում լույսով, այդ թվում նաև անդ-րադարձող.

դ. արգելք հանդիսանան հետիոտնի շարժմանը.

ե. լինեն ճանապարհների վտանգավոր հատվածներում և տեղադրվեն լուսամփոփների ու ճանապարհային կանգնակների վրա.

2) ցանկացած տիպի գովազդի միջոցների տեղադրումը պետք է հիմնավորել համապա-տասխան նախագծային և տեսողական ընկալման դիտակետից.

3) գովազդ տեղադրել չի թույլատրվում՝

ա. բնակելի շենքերի մոտ, եթե դրանք հանդիսանում են աղմուկի, տատանման, հզոր ճառագայթման և էլեկտրամագնիսական դաշտի աղբյուր.

բ. թանգարաններում, պատմական և ճարտարապետական հուշարձանների վրա, ինչ-պես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների շեն-քերի վրա և դրանց տարածքում.

գ. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահ-մանված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վրա և դրանց տարածքնե-րում (պետական հաշվառման վերցրած պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցների, դրանց

համակառույցների և համալիրների, իրենց գրված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքների վրա, ինչպես նաև պատմամշակութային արգելանոցներում) :

դ. ճանապարհային ցանցում, երբ այն անհամապատասխան է ճանապարհատրանս-պորտային տվյալ իրավիճակի հետ և նմանություն ունի (արտաքին տեսքով, պատկերով և ձայնային էֆեկտով) ճանապարհային նշանների, ճանապարհային երթևեկության կազմա-կերպման և այլ տեխնիկական միջոցների հետ.

4) Ալավերդի համայնքի հրապարակներում, ինչպես նաև դրանց համար մուտքեր և ել-քեր հանդիսացող տարածքների առանձին տեղերում կարող է տեղադրվել գովազդ, եթե այն չի խոչընդոտում ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը և հրապարակների կառուցապատման տեսողական ընկալմանը:

4.ԳՈՎԱԶԴԻ ԱՌԱՆՁԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

5. Վահանակային կայանքները (վահանակները) տեղեկատվության համար մակերես նախատեսող կոնստրուկցիաներ են և բաղկացած են հիմքից, հիմնակմախքից (կարկաս) և տեղեկատու դաշտից:

1) Տեղեկատու դաշտի չափի տեսակներն են՝

ա. մեծ չափերի - 3մx4մ, 3մx6մ և այլ չափերի

բ. միջին չափերի - 1.8մx1.2մ, 2մx3մ

գ. փոքր չափերի - 0.6մx0.9մ և ավելի փոքր չափերի.

2) վահանակներին ներկայացվող պահանջներն են՝

ա. երկկողմանի կատարում

բ. միակողմանի կատարում, որի դեպքում գովազդի հակառակ կողմը պարտադիր դեկորատիվ ձևավորում է.

3) Գյուլագարակ համայնքի կենտրոնական հատվածի սահմաններում թույլ է տրվում 0.6մx0.9մ, 1.8մx1.2մ, ինչպես նաև 3մx4մ մակերեսով տեղեկատու դաշտով վահանակների տեղադրումը.

4) Գյուլագարակ համայնքի կենտրոնական հատվածում տեղադրվող տեղեկատու դաշտով գովազդային վահանակի կրող հիմնասյան դիրքը պետք է լինի միայն ուղղահայաց.

5) Գյուլագարակ համայնքում 3մx6մ և այլ չափերի տեղեկատու դաշտով գովազդային վահա-նակների տեղադրումը թույլատրվում է համապատասխան նախագծային հիմնավորման առկայության դեպքում.

6) Գյուլագարակ համայնքի կենտրոնական հատվածից դուրս կարող են լինել 1.8մx1.2մ, 3մx4մ, 3մx6մ տեղեկատու դաշտով և այլ չափերի վահանակներ.

7) մայրուղիներում և պողոտաներում մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև հեռավորությունը պետք է կազմի առնվազն՝

ա. 15քմ – 18քմ և այլ չափերի 150մ-200մ

բ. 10քմ – 15 քմ՝ 100մ – 150մ

գ. 6քմ – 10քմ՝ 50մ – 75մ

դ. 4քմ – 6քմ՝ 30մ – 50մ

ե. 2քմ – 4քմ՝ 15մ – 25մ

զ. մինչև 2քմ՝ 10մ – 15մ.

8) Նեղ փողոցներում և նրբանցքներում մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև եղած հեռավորությունը պետք է կազմի առնվազն՝

ա. 10քմ – 12քմ՝ 50մ – 75մ

բ. 6քմ – 10քմ՝ 30մ – 50մ

գ. 4քմ – 6քմ՝ 20մ – 30մ

դ. 2քմ – 4քմ՝ 10մ – 20մ

ե. մինչև 2քմ՝ 10մ.

9) մասնագիտական փորձաքննություն անցած և համաձայնեցված նախագծերի առկա-յության դեպքում կարող են օգտագործվել կոնստրուկցիաներ, որոնց տեղադրումը համա-պատասխանում է մայրուղիների, փողոցների և քաղաքային գոտիների արտաքին ձևավոր-մանը ներկայացվող պահանջներին:

6. Շենքերի, շինությունների, ինչպես նաև Ալավերդի համայնքի բարեկարգման տարրե-րի վրա տեղադրվող գովազդի և տեղեկատվության մնայուն միջոցների տեսակներն են.

1) տանիքային կայանքները ծավալային կամ մակերեսային կոնստրուկցիաներ են, որոնք տեղադրվում են ամբողջովին կամ մասամբ՝ շենքի ճակատային մասում կամ տանիքին:

ա. Տանիքային կայանքները բաղկացած են կոնստրուկցիայի կրող մասի ամրակցման տարրերից և տեղեկատու կայանքից:

բ. Տանիքային կայանքները պետք է ունենան հակահրդեհային և հոսանքի վթարային անջատման համակարգ:

գ. Ամրակցման տարրերը, ինչպես նաև կոնստրուկցիայի կրող մասի հակառակ կողմը պետք է ծածկվէ դեկորատիվ պանելով:

դ. Տանիքային կայանքի տեղադրման հայտերն ընդունվում են պատվիրատուի կողմից մասնագիտական փորձաքննություն անցած կոնստրուկցիաների և համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված նախագծի առկայության դեպքում:

2) Պատի մեծանկարներ (պաննո) են կոչվում գովազդի այն միջոցները, որոնք տեղա-դրվում են շինությունների պատերին հետևյալ ձևերով՝

ա. պատկեր (տեղեկատվական դաշտ), որն անմիջապես շերտածածկում է պատը, պատ-կերի կոնստրուկցիան հավաքվում է ամրակցման տարրերից, հիմնակմախքից և տեղեկա-տու դաշտից.

բ. պատի մեծանկարները կատարվում են անհատական նախագծի հիման վրա.

գ. պատի մեծանկարները պարտադիր պետք է ունենան համապատասխան փորձա-քննություն անցած կոնստրուկցիաների նախագիծ.

դ. պատի մեծանկարների տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է կոնստրուկցիայի կամ անմիջական չափերով:

3) Բարձակ (կոնսոլային կոնստրուկցիա) են կոչվում երկկողմանի հարթակային վահա-նակները, որոնք ամրակցվում են կայմասյուններին կամ շենքերի վրա: Համապատասխան հիմնավորման դեպքում թույլատրվում է բարձակները տեղադրել համայնքային լուսավոր-ման և կոնտակտային ցանցերի կրող կոնստրուկցիաների վրա:

ա. Բարձակները պետք է լինեն երկկողմանի տեսքով և ունենան ներքին լուսավորում:

բ. Հիմքերի վրա (ուղղահայաց) տեղադրվող բարձակների տիպային չափերն են՝ 1.8մx1.2մ (մայրուղիների, պողոտաների, հրապարակների համար), 0.6մx0.9մ, 1.0մx0.7մ (նեղ փողոցների և նրբանցքների համար) և ավելի փոքր: Շահագործման անվտանգության նպատակով բարձակները տեղադրվում են հողի մակերևույթից ոչ պակաս, քան 3 մետր բարձրության վրա:

գ. Հիմքերի վրա տեղադրված բարձակները տեղադրվում են երթևեկելի մասից դուրս՝ մայթի կողմը: Արգելվում է մեկից ավել բարձակների տեղադրումը մեկ հիմքի վրա:

դ. Բարձակի տեղեկատու դաշտի մակերեսը հաշվարկվում է երկու կողմերի ընդհանուր մակերեսով:

7. Կրկնածիգ գրաժապավենը (տրանսպարանտ) գովազդի տեղեկատվության միջոց է: Այն բաղկացած է հիմքից, ամրացման սարքավորումից և տեղեկատու պատկերից:

1) Գրաժապավենների հեռավորությունն իրարից պետք է լինի 50մ-ից ոչ պակաս:

2) Գրաժապավենների բարձրությունը պետք է լինի երթևեկության գծի համեմատ 5մ-ից ոչ պակաս:

3) Տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է երկու կողմերի մակերեսով:

8. Էկրանավորող սարքավորումները գովազդի և տեղեկատվության միջոց են:

1) Դրանց կոնստրուկցիան ներառում է էկրանավորող (վերարտադրող) սարքավորման մակերես (էկրան) կամ տեղեկատու պատկեր:

2) Հարթ պատկերների համար նախատեսված տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է էկրանավորող պատկերի մակերեսով:

9. Գովազդի վահանակների միջև եղած հեռավորությունն ըստ տրանսպորտային միջոցների թույլատրվող արագության պետք է կազմի՝

1) 60 կմ/ժ թույլատրվող արագությամբ փողոցների համար մեկ ուղղությամբ երկու վահանակների միջև հեռավորությունը՝

ա. 18քմ – 150մ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՅՈՒՂԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԳՅՈՒՂԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» Գյուլագարակ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի պահանջներով, համա-ձայն որի, համայնքի ավագանին համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները:

«Տեղական տուրքերի և վճարներ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն, որպես տեղական տուրքի տեսակ է սահման-ված հետևյալը. «ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ հա-մայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների»:

«Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական տուրքերի և վճարներ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համապատասխան հոդվածների իրավահա-մեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջին հերթին ավագանու կողմից պետք է սահմանվի արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները, որից հետո և որի հի-ման վրա, պետք է սահմանվեի համապատասխան տուրքատեսակը: Այս երկու հարաբերու-թյունների կարգավորման հանրագումարում, համայնքի ղեկավարը պետք է տրամադրի համապատասխան թույլտվությունները:

Վերը մեջբերվածից հետևում է, որ սույն որոշման ընդունման անհրաժեշտությունը պայ-մանավորված է համայնքային մակարդակում արտաքին գովազդ տեղադրելու իրավահա-րաբերությունների կարգավորմամբ:

«Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» Գյուլագարակ համայնքի ավագանու որոշման նախա-գծով սահմանվում են.

- Արտաքին գովազդի հասկացությունը և նկարագրությունը.
- Արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության առանձնահատկությունները.
- Գովազդ տեղադրելու թույլտվության տրամադրման ընթացակարգերը.
- Տեղական տուրքի և /կամ/ հողօգտագործման վճարի մուծման կամ հավաքագրր-ման ընթացակարգը.
- Գովազդի միջոցները.
- Գովազդ տեղադրելու պայմանները.
- Գովազդի առանձին միջոցների տեսակները.
- Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվու-թյան ձևը և այլն:

«Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» Գյուլագարակ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման արդյունքում համայնքի վարչական տարածքում կկարգավորվի արտաքին գովազդ տեղադրելու հետ կապված իրավահարաբերությունները, օրենսդրական հիմքեր կստեղծվեն թե արտաքին գովազդի մասով համայնքի ավագանու կողմից տեղական տուրքի սահմանման և թե համայնքի ղեկավարի կողմից արտաքին գովազդի թույլտվություն տրամադրելու մասերով:

բ. 15քմ – 100մ

գ. 6քմ – 50մ

դ. 2քմ – 25մ

2) 60 կմ/ժամ թույլատրվող արագությունից պակաս փողոցների համար մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև հեռավորությունը՝

ա. 18քմ – 80-100մ

բ. 6քմ – 45-50մ

գ. 2քմ – 20-30մ

10. Գովազդային վահանակների ներքևի եզրը պետք է տեղադրված լինի փողոցի մակե-րեսից 6մ-ից ոչ պակաս բարձրության վրա:

11. Հենասյան հիմքերը հողի ծածկույթում պետք է տեղադրվեն քաղաքաշինական նորմե-րին և շինարարական տեխնոլոգիաներին համապատասխան՝ մեկ ամսվա ընթացքում վե-րականգնելով սիզամարգի ծածկույթը:

12. Չափորոշիչներում չնշված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշմամբ հաստատված ցանկում չընդգրկված 2.0 քառա-կուսի մետրից ավելի մակերեսով ֆիրմային նշանների և գովազդվող տարբեր ապրանքա-նշանների տեղադրումը թույլատրվում է Գյուլագարակ համայնքի ղեկավարի որոշմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 137 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.1-րդ կետի՝Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (12) | Դեմ (0) | Ձեռնպահ (1) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | | — | — | — |
| Սարգսյան Աիդա | | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | | — | — | — |
| Պառավյան Գոհար | | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | | — | — | — |
| Այվազյան Վրույր | | — | — | — |
| Գևորգյան Համլետ | | — | — | — |
| Քալաշյան Վարսենիկ | | — | — | — |
| Թորոսյան Հրայր | — | — | — | բացակա |
| Տոնոյան Արփյուն | — | — | | — |
| Գրիգորյան Թամարա | | — | — | — |
| Սարգսյան Ալիկ | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի11 N-137-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

1. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն թույլատրվում է իրականացն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի բնակավայրերի հյուրանոցներում. հյուրատներում, հրապարակներում, զբոսայգիներում և հարակից տարածքներում:

2. Տեխնիկական և հատուկ նշանակության հրագործական նյութերի (արտադրանքի) օգտագործումը չի թույլատրվում ցանկացած տիպի շենքերում, շինություններում, կառույցներում, պայթյունահրդեհավտանգ օբ-յեկտների տարածքներում, գազատար և նավթատար խողովակաշարերի, բարձր լարման էլեկտրահաղորդա-լարերի մոտակա տարածքներում, տանիքներում, պատշգամբներում, բեմահարթակներում, մարզադաշտերում և այլ մարզական կառույցներում, կամուրջների վրա, տրանսպորտային մայրուղիներում ինչպես նաև միտինգ-ների, քայլերթերի և ցույցերի ժամանակ:

3. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության անցկացնելու վայրում չպետք է լինեն ծառեր, էլեկտրահաղորդման լարեր և այլ օդային արգելքներ:

4. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության անցկացնելու վայրի չափերը պետք է համապա-տասխանեն հրագործական նյութերի (արտադրանքի) վրա նշված վտանգավոր տարածքի մաքսիմալ չափերին:

5. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելը պահանջում է հատուկ գիտե-լիքներ և հմտություն, կատարողների (օգտագործողների) համապատասխան որակավորում և (կամ) տեխնի-կական սարքավորումների «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետությա կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 845-Ն որոշմամբ սահմանվա պայմանների ապահովում:

6. Չի թույլատրվում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության անցկացումը ուժեղ քամու և անձրևի պայմաններում:

7. Չի թույլատրվում հրագործական նյութերի (արտադրանքի) օգտագործումը 18 տարեկանը չլրացած ան-ձանց կողմից:

8. Չի թույլատրվում ծխել հրագործական նյութերի (արտադրանքի) մոտ:

9. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության թույլատրելի ժամ սահմանել ժամը 9:00-ից մինչև ժամը 23:00-ն:

10. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ «Վարչակա իրավախախտում-ների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքո սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 138 -Ա

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՈՒՇԿԻՆՈ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՋՐԱԳԾԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածով, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից օգտակար հանածոների նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ -29/371 թույլտվության և « Հայասա Ռեսուրսիս Քորփ» ՍՊԸ-ի պայմանագրի հիմնա վրա Գյուլագարակ համայնքին փոխանցված 1 500 000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար /ՀՀ դրամ գումարից կատարել վճարումներ Պուշկինո բնակավայրի ջրագծի ներքին ցանցի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ /13/ | Դեմ /0/ | Ձեռնպահ /0/ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | | — | — | — |
| Սարգսյան Աիդա | | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | | — | — | — |
| Պառավյան Գոհար | | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | | — | — | — |
| Այվազյան Վրույր | | — | — | — |
| Գևորգյան Համլետ | | — | — | — |
| Քալաշյան Վարսենիկ | | — | — | — |
| Թորոսյան Հրայր | — | — | — | բացակա |
| Տոնոյան Արփյում | | — | — | — |
| Գրիգորյան Թամարա | | — | — | — |
| Սարգսյան Ալիկ | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 139 -Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 64-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Գյուլագարակ համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդով օտարելու և վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» թիվ 64-Ա որոշման երկրորդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

1) 1/մեկ/ լոտով 0,08661 հա հողամասը նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, ծածկագիր 06-093-0023-0017, և հողամասում առկա 06-093-0023-0017-001 ծածկագրով 60.8 քմ մակերեսով հիմքերը մեկնարկային գինը 190000 / հարյուր իննսուն հազար / ՀՀ դրամ:

2) 2 /երկու/ լոտով 0,08688 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, ծածկագիր 06-093-0023-0018 և հողամասում առկա 06-093-0023-0018-001 ծածկագրով 61.6 քմ մակերեսով հիմքերը մեկնարկային գինը 190000 /հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ:

3) 3/երեք/ լոտով 0,06235 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, ծածկագիր 06-093-0023-0019 և հողամասում առկա 06-093-0023-0019-001 ծածկագրով 59.7 քմ մակերեսով հիմքերը մեկնարկային գինը 140000 / հարյուր քառասուն հազար / ՀՀ դրամ:

4) 4/չորս/ լոտով 0,04513 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, ծածկագիր 06-093-0023-0021 և հողամասում առկա 06-093-0023-0021-001 ծածկագրով 64.1 քմ մակերեսով հիմքերը մեկնարկային գինը 100000 / հարյուր հազար / ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ /8/ | Դեմ /-/ | Ձեռնպահ /4/ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | [signature] | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | [signature] | — | — | — |
| Սարգսյան Աիդա | [signature] | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | [signature] | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | [signature] | — | — | — |
| Պատավյան Գոհար | [signature] | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | [signature] | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | [signature] | — | — | — |
| Այվազյան Վրույր | — | — | [signature] | — |
| Գևորգյան Համլետ | — | — | [signature] | — |
| Քալաշյան Վարսենիկ | — | — | [signature] | — |
| Թորոսյան Հրայր | — | — | — | — |
| Տոնոյան Արփյոմ | — | [signature] | — | բացակա |
| Գրիգորյան Թամարա | — | — | [signature] | — |
| Սարգսյան Ալիկ | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

[stamp]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 140 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և նույն օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Գյուլագարակ համայնքի չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել 2024 թվականի փետրվարի 13- ին, ժամը՝ 14:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (13) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | | — | — | — |
| Սարգսյան Աիդա | | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | | — | — | — |
| Պառավյան Գոհար | | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | | — | — | — |
| Այվազյան Վրույր | | — | — | — |
| Գևորգյան Համլետ | | — | — | — |
| Քալաշյան Վարսենիկ | | — | — | — |
| Թորոսյան Հրայր | | — | — | բացակա |
| Տոնոյան Արփյոմ | | — | — | — |
| Գրիգորյան Թամարա | | — | — | — |
| Սարգսյան Ալիկ | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/